



17. ԼԱԼԱԶԱՐ

Մե թաքավոր կըլի, ըրոր իրեք իատ աղջիկ կըլի, էդ աղջիկ-
Յեր ասին.— Մեր խեր ընչի՞ մեզի շտար մարդի. արեք, ամեքիս մե
ձմերուկ բերենք, գրենք վրեն, օղորկենք թաքավորին:

Ձմերուկ որ գրին, պրծան, ամենք մեկ դանակ զանին ձմերուկ-
ների մեջ, օղորկին թաքավորի կուշտ:

Թաքավոր վաքիլ, վազիրը խանչեց, էկան ուր կուշտ, ասին.

— Թաքավո՞ր ապրած, քո աղջիկներ խասած են, ձմերուկներ
կտրենք, ո՞ր մեկ մարդացու է, էնի մարթի էթա:

էն շոջ աղջկա ձմերուկ կտրին, որ լախ էր, ասին.

— Հսու սաղ երի գիտիպ՛:

Միջնեկ աղջկա ձմերուկ կտրին, տեսան որ խասուկ ա, ասին.

— էսի մարդացու ա:

էն պստըկին էլ կտրին, որ խակ ա:

Թաքավոր էն միջնեկ աղջկան ասաց.

— Արի՛, քեզի տամ մարդի:

— Թաքավո՞ր ապրած,— ասաց,— ընձի մե ձի տո՛ւ, էթամ
աշխրըքներ պտըտիմ, մե ձեռք էլ ասպապ տո՛ւ, ո՞րտե որ լավ տգա
գտա, դամ քեզի ասեմ, ընձի տո՛ւ ընդոր:

Խորից թամանտար էլավ, ընկավ ճամբախ:

¹ Առջ տեղը գնացեր է (Յ. Ա.):

Տղամարդի գրլըզ խաղավ, ձինը քշեց. դնաց մե խելի ճամբախո Տեսավ մե դել, մե էրախա առծր բերան՝ դալըմ ա. ձինը քշեց վրձն, դելը էրախան թալեց, փախավ:

էդ աղջիկ դնաց, վերցրեց տղին ուր դիրկը:

էդ աղեն ասաց.— Ղարի՛ւ պ աղբեր ջան, ես թաքավորի տղեն եմ, կտանես իմ խորս՝ ես եմ, մե ումուտ՝: Ընձի տար թաքավորի կուշտ, քեղի մալ ու դուլվաթ կուտա՝ շառնի՛ս. ընոր մե կալազաց անուն ձի կա, էնի՛ ուղա, ո՛րտե՞ որ նեղութենի մեջ ընկնես, էնի բծդի կփրցրնև: Որ կխեծնիս, հավալանմիշ կըլլի էրկնքի էրես, քեղի կուտա Սամուելա քամու բերան. ասա. «Ես կխաղամ քո փորի տակ»: Որ կասա. «Ջանեմ, կէթաս օխտը դաբաղա գետնի տակ», դու ասա. «Քամկիդ վրձն կըլլեմ»: էն դախ կալազար կասա. «Դու իմ տերն ես, ես էլ քո ձին եմ»:

Թաքավորի աղջիկն էր, տղեն առավ-դնաց. էն տեղեն մե լըփ-րատին՝ մեկն էկավ.— Շա՛ն որդի,— ասաց,— թաքավորի տղեն գո՛ր ես տտնրմ, մեր թաքավոր ցնդվավ:

Թաքավորի աղջիկ ասաց ուրին-ուրին. «Ա՛յ հա՛յ, ես աղջիկ եմ, էդի տղամարդ, իմ ձեռնից կառնի, կէթա»:

Թաքավորի աղջիկն էր, շարաց նամարտութեն, մե շափալեղ դանեց, որ դանեց՝ բերնիցը ջուրը թռավ:

Ըդ տղեն էր, ետ դարձավ, թողեց-դնաց:

Աղջիկը մե խելի տեղ էլ գնաց, մե մարդ էլ էկավ ըռաստ. ասաց.

— Շա՛ն որդի, թաքավորի տղեն գո՛ր ես տտնրմ:— էկավ, ի՛նչ ա՛ աղեն թաքավորի աղջկա ձեռնիցը առներ:

Թաքավորի աղջիկ մե փետ որ շղանեց՝ էդ մարդի վիզ լեկ-վեցավ:

Թաքավորի աղջիկ էդ տղեն վերցրեց, տարավ, տվեց թաքավորին:

Թաքավորը ուրխըցավ, էլավ էդ տղի էրեսները պալեց:

Մե ժուկ ու ժամանակ էդ թաքավորի աղջիկ մնաց էդ թաքավորի կուշտ. մե օր ասաց.

— Թաքավո՛ր, ընձի մուրախասն տո՛ւ, ես էթամ:

1 Հույս (Մ. Ռ.):

2 Շառառ (Մ. Ռ.):

3 Արձախում, հրաման (Մ. Ռ.):

— Որդի՛, ի՞նչ ես ուզում, քեզի տամ, քո ամառի տկից թու
ըլլեմ:

— Թաքավո՛ր ապրած, ես շնորհակալ եմ քեզնից, ի՞նչ պըտի
տաս:

— Չէ՛, ուզա՛:

— Էդքան ընձի շարշարում ես, քու Լալազար ձինը տո՛ւ:

— Հա՛յ քո սորվեցնողի վիզը կոտրի, որդի՛, իմ ձինը մի՛
ուզեր, ի՞նչ դտար մալ ու դովաթ կուզես՝ տամ:

Թաքավորի աղջիկն էր, խոռվաց, էլավ քոշկ ու սարից դուս:

էն տղեն ընկավ էտ աղջկա էտև, ասաց.

— Էնի իմ խերն ա, էնի ընձի զիլու բերնից ազատեր ա:

Թաքավոր գնաց ըդոնց դարձրեց-բերեց, խոտղին ասաց.

— Խոտա՛ղ, գնա՛ Լալազար ձինը թամքա՛, բե՛ր, թող խեծնի,
ըսդոր տա Սամուելա քամու բերան, էթա ընի սար, ձոր, ըդոր ջան-
դակ շան ու գիլու փայլ ըլլի:

Լալազար ձին էր, քաշին, դուս խանին: Թաքավորի աղջիկն էր,
խեծավ ըդոր:

Լալազար ձին էր, հավալանմիշ էլավ էրկնքի էրես, ասաց.

— Թաքավորի՛ աղջիկ, քեզի պըտի տամ Սամուելա քամու
բերան:

— Կիջնեմ քո փորի տակ,— ասաց աղջիկ:

— Թաքավորի աղջի՛կ, կզանե՛մ կէթաս օխտը դարաղա գետ-
նի տակ:

— Կխաղամ քամկիդ վրեն:

Լալազար կակղացավ, ասաց.— Դու իմ տերն ես, ես քո ձինը,
ո՛րտե մուրազ ունես, քջե՛ էթանք:

Թաքավորի աղջիկ թաքավորից թամանտար էլավ, քջեց դնաց.
մե շայիր-չիման տեղ ըռաստ էկավ ըդոր. մե աղբուրի վրեն նըս-
տավ, ասաց. «Մե թիքա խաց ուտեմ, դինջընամ քնեմ, ըլլեմ
էթամ»:

Ղայդը զանեց Լալազարի ոտներն ու քնավ. յափունջին քաշեց
վրեն:

էն դեխեն իրեք ձիավոր էկան:

Լալազար խրխընջում ա, էնդար խրխընջաց՝ գետինը մե շոք
քանդեց: Էդ ձիավորներ բոռացին:

— Շա՛ն որդի, ընչի շե՛ս իմանում, քո ձին շթողնում ա՛ մենք մեր ճամբով էթանք:

է՛, թաքավորի աղջիկն ա, իմցավ, մե ծմրկտաց, մղուկ քշեց, դայդր ձիու ոտներից առավ, խեծավ:

— Աղբրտա՛նք,— ասաց,— դու դո՛ր եք էթում:

— Ըստե մե թաքավորի աղջիկ կա, էթում ենք էնի առնենք. քառուսն դադական լենութեն խոր ա փորե. ո՛րը ձինը թոցրեց խորը՝ էթա թաքավորի աղջիկը առնի:

— Աղբրտա՛նք, արի՛, ձեր մի ձին տվեք ինձի, իմ ձին տամ ձեզի:

էն մեկը ասաց.— Շա՛ն որդի շըլի՛, մեր ձին քո ձիուց սլակա՛ս ա, որ փոխենք:

Ընդունք քշին, դնացին քառուսն դադական խորի կուշտ կայնան:

Ջուղապ դնաց թաքավորին:

Թաքավոր վերցրեց ղոշուն, էկավ խորի առեջ կայնավ, ասաց.

— Ձեր ձիանք թոցրեք, տենանք:

էն մեկը թոցրեց՝ ինք, ձին էլ ընկան մըջ խորին, ջարդվան:

էն մեկն էլ էն օրինակին ընկավ. էն մեկելն էլ էն օրինակին ընկավ մըջ խորին:

Մնաց մինակ թաքավորի աղջիկ. ուղեց որ ետ դառներ, էթեր. թաքավոր ասաց.

— Շա՛ն որդի, դո՛ր ես էթում, քո ընկերտանք ընկան մըջ խորին, ջան սխա սատկան, մկա քեղի կրտամ սըսանել:

Աղջիկն էր, թաղատան էկավ խորի կուշտ, կայնավ:

Լալաղար ձին էր, աստրծու խրամանքով լիղու էլավ, ասաց.

— Շա՛ն որդի, բուղդա-րիթի՛ ղըռ հալա ո՛ւր ա դու ընձի նեղութենի մեջ էցդիս. դե՛, ըջի՛, մե լավ արարի-թիմար տո՛ւ ընձի, իմ ղոլներ լա՛վ կքաշես, իմ սոշ դայիմ կկասես, կըլլես, էրկու գլուխ կակուղ կէթաս-կուղաս, մե ջուխտ դանկու կղանես իմ փորի մեջ, որ քառուսն դադական թողիմ դե՛ս, քառուսն գադական էլ խորից դեն թոնեմ:

Խաղցուց, դանկու տվեց, թռավ:

էն տեղ Լալաղարի ծծած կաթը սնչներից էկավ:

1 Ծորենի ոչիլ (Մ. Բ.):

Ուրախ-ուրախ տարան էդ աղջկան թաքավորի աղջկան քոչք
ու սարենն:

Թաքավորի աղջիկ ուրխրցավ, թե իմ մարդը էկավ:

Տեսեր էր խորոտ, էրեցեր էր ընդոր դիմաց¹:

Արև մտավ, բերեց ճրագը փշեց, տղին քաշեց ուր ղութուղ:

Տղեն թուրը քաշեց, դրեց օրթալախ:

— էսօր խաթր անեմ աստըծուն,— ասաց աղջիկը:

Մնաց էն գիշեր, էլի տղեն թուրը դրեց օրթալախ:

Աղջիկն էր, էլավ դըռ հլա լուս շթացվեր էր, լըփլըփալեն գնաց
թըխ ուր մեր, ասաց.

— Ո՛չ ինք ըլի, ո՛չ ուր անուն ըլի. էն էլ ա աղջիկ, ես էլ եմ
աղջիկ:

Թաքավոր լսեց, ուր խոտղին օղորկեց փեսի ետև, բերեց:

Փեսեն էկավ, թամանտար էղավ, ասաց.— Հա՛, թաքավոր ապ-
րած, ի՞նչ կա:

— Փեսա՛,— ասաց թաքավորը,— դե՛ էն սարի վրեն օխտը դե
կա, օխտը տարվան խարճը չեն տված, գնա՛ բեր:

Տղեն դարձավ լալելին կալազարի մոտ, հըմա՛լ օ աչքեր ու-
ռեր ա:

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի,— ասաց կալազար,— դո՛ւ որ էդ
օրինակին էր, ընչի՞ ընձի բերիք, էցդիր էս կրակների մեջ. թաքա-
վորի աղջիկ, մի՛ վախենար, գնա՛, կոտ մը շամիչ բեր, լի՛ց իմ
առեջ, ես ուտեմ. կըլլես մե լավ թիմար կըտաս, թամքս կդնես
վրես, դուներս լավ կզլես, կըլլես մի սամու կտոր կառնես քո ձեռ,
կխեծնես, քչես. իմ գիզկին չես քաշե, որտե կէթամ, ես կէթամ:

Գնացին, էլան մե սարի կող, էնտե մե շաղչի քար կեր, ասաց
ձինը.

— Դե՛, ըչի՛, իմ պոչ օլըբա, էդ քարի ծկով ընցըցըբա, պոչիս
ծերը խանգուրցա՛ սալին ընցըցըբա իմ պոչի արանք:

Խեծավ կալազարը, էդ քարը Ֆըռըֆոացնելով առավ, գնաց,
գևերի դուռը կայնավ, բոռաց.

— Դե՛ր, բերե՛ք օխտը տարվան խարճը:

Դե՛րն ասին.— Շուտուց իսանաթի միս չինք կերե, մեր ատամ-
ներ ճլվտըմ էր:

¹ Գառճառով (Մ. Բ.):

Գեների ջոջ աղբերը դուս էլավ, տեսավ էդ տղեն մի քար ֆըռ-
ֆըռացնը՞ ա. դուտումը կոտրավ, խելքաթափ գնաց, ընկավ,
էն մեկել դեերը ասին.— Քո դուտումը... ընչի՞ վախեցար
Միջնեկ աղբերը ասաց.— Դու կեցե՛ք, ե՛ս ըլեմ դուս, անւախ
մե խանաթ ա կպե մեղի:

էլավ դուս, ընդու դուտումը տահա ջուտ կոտրավ, ասաց.

— էս՝ ձիու դուվաթն ա, ըպա էդ շա՛ն որդու դուվաթն ի՛ն-
չար ա:

— Դե՛, շո՛ւտ արեք, խարճը բերե՛ք, թը չէ՛ ձեղի կջարդեմ.
չա՛նորդի փրշտոններ, դու էսա օխտը տարի ա ընչի՞ թաքավորի
խարճը շեք տալըմ, զոոպութեն անըմ եք:

էն պատիկ դեն ասաց.— Կեցե՛ք, մե դուս ըլլեմ, ընդու ճըղճը-
ղեմ իրարուց:

էլավ շեմը շենքեց, դուտումը կոտրավ, ո՛չ կարցավ դես էթեր,
ո՛չ կարցավ դեն էթեր. լիդունը կպավ:

Գեները ասին.— Բերե՛ք, օխտը տարվան խարճը տանք, էդ
չանորդին մկա մեղի կջարդա:

Բերին օխտը տարվան խարճը լցրին մե մաղե տոպրակի մեջը,
թալին ձիու թարկր:

Լուսողար ասաց.— Թաքավորի՞ աղջիկ, դարձրե՛ ընձի, էթանք:
Բերեց, էդ քարը ուր տեղը դրեց:

Թաքավորը ուրին-ուրին ասաց. «էս ի՛նչ դոշաղ տղա էր, ֆա-
րաղի մենք ըսու ղլոխ կորցնրմ ինք»:

Թաքավորի աղջիկն էր, տեղը էցղեց, պառկավ:

Տղեն էր, էլի թուրը քաշեց, դրեց օրթալախ:

Աղջիկը ուրին միտք արեց. «Կըլլի որ դեերի ինտ կռիվ ա ա-
ռեր, իաթր անեմ»:

Մնաց էն գիշեր, էլի էնպեսդ արաց տղեն:

Դրու հալա լուսը շքացվեր էր, թաքավորի աղջիկ էլի լքնավ
թրի ուր մերը, ասաց.

— Ո՛չ ինք ըլլի, ո՛չ ուր թաքավորութեն. էն էլ ա աղջիկ, ես էլ:
Թաքավոր ուր վաքիլ-վաղիր խանչեց, բերեց, ասաց.

— Իմ լաշառ՝ աղջիկ իմ ապուռը տարավ. ասրմ ա. «էն էլ
աղջիկ, ես էլ եմ աղջիկ», մենք ո՛րտեղ օղորկենք, որ կուրիսի:

1 Շատախոս (Ս. Բ.):

— Թաքավոր,— ասին,— Սև ծովի, Սիպտակ ծովի արանք մե խրեղեն ձի կա, օղորկա, էնի բերա. էն խրեղեն Բոզ ձին որ իսանաթի տեսավ, փարալամիշ կանե:

Թաքավոր խոտողին օղորկեց ուր փեսի էտև:

— Որդի,— ասաց,— կէթաս Սև ծովի արանք, Սիպտակ ծովի արանք, մե խրեղեն ձի կա, կբերես:

Տղեն դարձավ թրխ կալազար: Տեսավ ձինը էնդա՛ր լացեր ա՛, ուր աչքեր ուռեր ա. ներս մտնալուն քիմի՛ ձինը ասաց.

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի, էն խրեղեն ձին իմ մերն ա, էնի բերել դժար ա. է՛, աստված օղորմած ա. գնա՛, օխտը ղիտը գինի առ, մե ղիտը կուպր առ, օխտը գոմշի կաշի առ, մե ղազան առ, բարձի ընձի ու խեծի:

Առավ, խեծավ, քշեց: Ձին ասաց.— Իմ դիզկին շքաշե՛ս, շթե-քե՛ս. ես որտե՛ կայնա, ընտե ըշի՛:

Քշեց-գնաց, ծովի ղրաղ կայնավ:

Կալազար ասաց.— Ղազնի տակ մե կրակ դի՛, կուպր խալա՛, բեր քսա կաշուն վրեն, օխտն էլ կպցրա իմ մեջքի վրեն. գնա էգ կղզու արանք, էնտե մե աղբուր կա, էդ աղբուր լավ կըկրճես, էն օխտը ղիտը գինին լից էն աղբուր. կեսօրվան շրջոքին էնի դուս կըլլի, կուգա աղբուր, որ շուր խըմա. խոտ կառնի, կՖըռա, ետ կքաշվի. էդ շրջոքն էդ Բոզ ձիուն հաղթ կառնե. էն կխմա, աչքերը կկարմրի, կքեֆովնա, կասա. «Մե իսանաթ ըլլեր, իմ թամքն էլ էնտե ա, բերա դնա իմ վրեն, ղոլներ լավ ղայիմ քաշա, էրկու գլոխ կակուղ էթա, գա, է՛լ ընձի բրախա իմ ծովի մեջ»: Դու կլսես, կը-խեծնիս:

Կալազար ձին էր, կուպր որ կպցրեց ջան, ասաց.

— Ես կէթամ զա՛տ՝ կայնեմ, դու գնա՛:

Տղեն գնաց մե տալտա տե կայնավ: Ջրշոքին էկավ խրեղեն ձինը, գինին խմեց, քեֆովցավ, էնպես էլ ասաց:

Տղեն որ խեծավ, Բոզ ձին հավալանմիշ էլավ էրկնքու էրես: Տղեն ասաց.

— Սե՛րն աստըծու, Բո՛զ ձի, ընձի մի՛ տու Սամուելա քամու բերան, քո կալազարի տեղն ասեմ:

Որ ասաց, Բոզ ձին ասաց.— Դե՛, շուտ արա, ասա՛, թը չէ՛՝ կուտամ Սամուելա քամու առեջ, խոգիդ կհանեմ բերանդ:

Կ ՀԵՄԵ (Մ. Բ.):

— Ընծի մըսսպանի, դո՛ւ էն ա կալադար տղեղ:
Կալադար կասա թաքավորի աղջկան.— Ղալիմ բունա՛, շընկնիս
լրնից, թաքավորի՛ աղջիկ.— ասաց ու փախավ:
Բող ձին ընկավ էտե, լարեց. օխտը խետ բերան թալեց կալա-
դարի կաշուն, Բող ձիու սեյրը բողմիշ էլավ:
Ըս խետ կալադարը ասաց.— Մորս մ'էլիի, արի, ընծի խեծի:
Տղեն Բող ձին տարա՛վ, տվեց թաքավորին:
Թաքավորը ասաց.— էսի ի՞նչ ղոշաղ ա, ըսզու սըպանել
մեղք ա:

էլի էն դիջեր թաքավորի աղջիկ մտավ ուր տեղը. էս տղեն էլի
թուրը օրթալախ դրեց. էլի ղըռ հալա լուս շբացվեր էր, աղջիկ լրք-
նավ թրխ ուր մեր, էլի մոր էնպեսդ ասաց:

Թաքավորը օրոն էրեց, ղտավ մի խարիր տարեկան պառավ,
խարցրեց.

— Պառա՛վ, հ'ըմալ տեղ դիտե՛ս, որ ես իմ փեսին օղորկիմ,
չդա:

— Թաքսուլո՛ր ապրած,— ասաց պառավը,— Չինըմաշինա քա-
ղարը, ընդոր քամակը մե Սե, մե Սիպտակ սար, ընդոր արանքը մե
դե կա, ընդոր աղաքը մե շամդան կա. էն շամդընին կըլի խարիր
մարդ դասեր ա, էն դեր ամենքին էլ սըպաներ ա:

Թաքավոր օղորկեց, փեսին բերեց՝ օղրկե էն Սե, Սիպտակ
սարի արանքը, որ դեի առջեից ջամդան առնե, բերա:

Տղեն էր, դարձավ թըխ ուր ձին, տեսավ կալադարն էլի լալըմ
ա, կալադարի մե՛րն էլ, ասաց.

— Շա՛ն որդի, բուղղա-բիթի, դու էդ հունարի տերն էր, ընչի՛
բերիր մեղի... Աստված օղրմա՛ծ ա, էս խետ մերս էլ խետդ ա՛ռ,
ես մինակ չկարնամ:

Չամիչը կերան ձիանք, տղեն խեծավ-քշեց, չուրի Չինըմաշինա
քաղաք ընցան, դնացին Սե, Սիպտակ սարի արանքը:

Կալադար ասաց.— Թաքավորի աղջի՛կ, մեղի թո՛ղ ըդ դեն, էս
տալաս: տեղը՝ դեր մեղի շճանչնա, որ խրեղեն ձի ենք, որ իմանա՛
բեղի էստեղ կճըղճըղա, մեղի էլ կջարդա. յավաշ-յավաշ դնա՛ թըխ
դեը, դեի քամակը կր կայնիս. էնի իրեք խետ ա ննջըմ. թե որ
փա՛խցրիր, ասա. «Կալադա՛ր, իմ տակը ըլլես», ես քո տակը կըլլեմ,
մի՛ վախնար:

էդ աղջիկն գնաց, կայնավ դեի քամակը. դեը մե խետ ննջաց.
ձեաք թալեց, չկարցավ փախցըցեր:

— Աստված,— կանչեց,— դու ընծի ազատես էս դեի ձեռնիցս։
Դեռ մի խեղ էլ ննջաց. էլի աղջիկ ձեռ թալեց, չկարցա՛ւ, էլի
աստված կանչեց։

Դեռ մե՛կ էլ որ ննջաց, շամդանը փախցրեց, ասաց.

— Լալազա՛ր, դու իմ տակը ըլլես։

Լալազար էկավ ըզոր տակը։ Քշեց, դնաց։

Դեռ իրիշկեց, ասաց.

— Շա՛ն որդի, դու հալա ես իմ քունը շեմ առեր, մե թիքա-
աչքս կպցնեմ, գնա՛, շուր ըստուց էրևում ես. մե՛ ամիս էթաս, մե՛
օրը ես կխասնեմ։

Եդի ուր քունը առավ, էլավ տեսավ, ի՛նչ որ կրակը զատ տեղը
բժկըտում ա աստղի զայտի, ասաց.

— Ա՛յ-հա՛յ, բոլ ճամբախ ին գացած։

Էդ դեն ուրին էդ տեղից թալեց. ընդոնք մտան ծովը, ինքն էլ
ծովի ամիով ընցավ, ասաց.

— Խո՛ղածին, կայնի՛ քեզի մե բան ասեմ. դու տարար իմ
շամդան, էրկու-իրեք խարիր մարդ էկան, չկարցան տանեն՝ շար-
դի՛, խո՛ղածին, դու որ տղա ես, աղջիկ դառնաս. թե որ աղջիկ ես՝
տղա դառնաս,— ասաց, դարձավ ետ։

Դեն որ անիծեց, էս թաքավորի աղջիկ տղա դարձավ։

Լալազարն էլ ղսրախ, Լալազարի մերն էլ որձ ձի դարձավ։

Էդ աղջիկը էլավ տղա, տարավ շամդանը տվեց թաքավորին։

— Ա՛յ-հա՛յ, լըլի, էսի իմ քաղաք կընցըցե, ըսդու վիզը
կտրեմ։

Էս տղեն իրկուն դնաց ուր տեղ. թաքավորի աղջիկ լուսուծ
գնաց, ուր մոր ասաց.

— Ադե՛, էսպեսդ տղա աշխրքներ էլ ման գի, չի գտնի։

Մնաց մե ժուկ-ժամանակ։ Մե օր թաքավորի տղեն լալում ա.—

Ընծի՛ էլ խեր-մեր կա,— ասում ա։

Գնաց թաքավորից իղին առավ, դարձավ ուր խոր տուն։

Եք մոտկըցավ ուր խոր բալախանեքին, խապար ճամբեց։

Թաքավոր էկավ, տեսավ ուր աղջիկ տղի ըռանկին ա. խարցը-
րեց, իմցավ, ի՛նչ որ աղջկա գլոխ արինք-դարինք էկեր էր։

Նոր խերը ուրխըցավ, իրեն տղա չկեր։

— Փա՛ռք տընեն քեզի, աստված,— ասաց։

Վեց, օխտը օք խարսնիս արաց. ընդոնք խասան ուրանց մու-
րադին...։